

ՈՒՍՈՒՅՍԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

Տասնմեկերորդ հաղորդում

Ավարտունացած Աստծու աստվածամարդկային ընդհանրականությունը վերածնված հավատացյալների հետ. Քրիստոսի՝ Հոր կողմից աստվածային փառքով փառավորվելու արդյունքը

Գրվածքների ընթերցում. Ղկս 12:49-50, Հվի 12:23-24, 14:2, 10-11, 17, 20-21, 23,
15:1-8, 16, 16:13-16, Հյտ 21:3, 22

I. Մենք պետք է տեսնենք, որ ամբողջ տիեզերքում Աստծուն միայն մեկ բան է անհրաժեշտ. Իր՝ որպես ավարտունացած Աստծու տիեզերական ընդհանրականությունը վերածնված հավատացյալների հետ՝ Հվի 14:10-11, 20, 17:21, 23, 14:23, Հյտ 21:3, 22.

- Ա. Տիրոջ հետ հավատացյալների փոխարաբերությունը կարելի է նկարագրել «միուրյուն», «միաձուլում» և «ընդհանրականություն» բառերով. «միուրյունը» վերաբերում է Տիրոջ հետ կյանքում մեր միասնությանը, «միաձուլումը» կապված է աստվածային և մարդկային բնությունների հետ, իսկ «ընդհանրականությունը» անձերի՝ միմյանց բնակեցնելն է, փոխներկայությունը՝ Հվի 15:4-5, Բ Պտ 1:4, Հվի 14:20:
- Բ. Աստվածային Երրորդության երեքը ընդհանրականություն են հավիտենությունից և այն բանում, ինչ Նրանք են, և այն բանում, ինչ Նրանք անում են՝ խ. 10.
1. Աստվածային Երրորդության երեքը ընդհանրականություն են փոխներկա լինելու շնորհիվ՝ «Ես Հոր մեջ եմ, և Հայրը՝ Իմ մեջ»՝ խս. 10ա, 11ա:
 2. Աստվածային Երրորդության երեքը ընդհանրականություն են միասին որպես մեկ աշխատելու շնորհիվ՝ «Այն խոսքերը, որ Ես ձեզ ասում եմ, Ինձնից չեմ խոսում, այլ Իմ մեջ հարակայող Հայրն է Իր գործերն անում» (խ. 10р), «հենց գործերի շնորհիվ հավատացեք» (խ. 11р):
 - Գ. Գրծ 2:23-ը ենթադրում է, որ այս տիեզերական աստվածային ընդհանրականությունը՝ Աստվածային Երրորդության երեքը, հավիտենությունում խորհուրդ արեց և որոշեց Աստվածային Երրորդության երկրորդին ուղարկել ժամանակի մեջ, որպեսզի Նա մարդ դառնար Աստծու աստվածային տնտեսության իրականացման համար՝ Ա Պտ 1:20, Մք 5:2, հմնտ Ծնդ 1:26:
 - Դ. Մինչ մարմնացումը այս տիեզերական ընդհանրականությունը բաղկացած էր երեք կողմերից. հետո Աստվածային Երրորդության երկրորդը այս աստվածային ընդհանրականությունը բերեց մարդկայնության մեջ՝ Հվի 14:10-11:
 - Ե. Աստվածային Երրորդության երեքը անցյալ հավիտենությունում արդեն ընդհանրականություն էին. այս ընդհանրական Աստված մտավ ժամանակի մեջ, որպեսզի Իր բոլոր ընտրածներին Իր ընդհանրականության

ԱՍՏՎԱԾԱՍԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

մեջ ներառի՝ վերածնված հավատացյալների հետ ավարտունացած Աստծու մեծ տիեզերական աստվածամարդկային ընդհանրականություն ստեղծելու համար՝ 17:21:

Զ. Հվի 14:20-ը բացահայտում է, որ ավարտունացած Եռամեկ Աստված և վերածնված հավատացյալները Քրիստոսի հարության մեջ ընդհանրականություն դարձան.

1. «Այն օրը՝ Որդու հարության օրը:
2. «Դուք իմանալու եք, որ «Ես Իմ Հոր մեջ եմ» (Որդին և Հայրը մեկ ընդհանրականություն են կազմում), «և դուք՝ Իմ մեջ» (վերածնված հավատացյալներն ընդհանրականության մեջ են Որդու և Որդու մեջ Հոր հետ), «ու Ես՝ ձեր մեջ» (Հոր մեջ Որդին ընդհանրականություն է կազմել վերածնված հավատացյալների հետ):
3. 17-րդ խոսքում իրականության Հոգու առնչությամբ օգտագործած «մեջ»-ը («Իրականության Հոգուն.... ձեզ հետ է մնում և ձեր մեջ կլինի») 20-րդ խոսքի երեք «մեջ»-երի հանրագումարն է:

II. **Քրիստոսի աստվածայնության փառքի ազատագրումը Հոր՝ Քրիստոսին աստվածային փառքով փառավորելն է (12:23-24) Նրա հարության մեջ Նրա մահվան միջոցով (Ղկս 24:26). Նրա աստվածային կյանքով հանդերձ Նրա աստվածայնության փառքի ազատագրումը երկրի վրա կրակ գցելու համար էր (12:49-50).**

Ա. Քրիստոսի աստվածայնության փառքը թաքցված էր Նրա՝ որպես ցորենի հատիկի մեջ. Նրա մարդկայնությունը նրա մարմնացման միջոցով պատիճ դարձավ, որը թաքցնում էր Նրա աստվածայնությունը՝ Նրա աստվածային կյանքով հանդերձ՝ Հվի 12:23-24:

Բ. Տերը նեղված էր ու տվայտվում էր՝ ցանկանալով մկրտվել Իր մահվան մկրտությամբ՝ Իր աստվածային կյանքով հանդերձ Իր աստվածայնության փառքի ազատագրման համար Իր մարդկայնության պատիճի կոտրվելու միջոցով՝ Ղկս 12:49-50, Հվի 12:23-24.

1. Նա եղակի հատիկն էր, որը բռվանդակում էր Նրա աստվածային կյանքը՝ Նրա աստվածային փառքով հանդերձ. երբ Նրա մարդկայնության պատիճը կոտրվեց Նրա խաչելության միջոցով, միաժամանակ ազատագրվեցին Նրա աստվածայնության բոլոր տարրերը՝ Նրա աստվածային կյանքն ու Նրա Աստվածային փառքը:
2. Նրա անսահմանափակ ու անսահման աստվածային էությունը՝ Նրա աստվածային կյանքով հանդերձ, Նրա ֆիզիկական մահվան միջոցով ազատագրվելուց հետո հարության մեջ Նրա հավատացյալների հոգևոր կյանքի խթանը դարձավ:
- Գ. Քրիստոսի աստվածայնության փառքի ազատագրումը Հոր՝ Նրան աստվածային փառքով փառավորելն էր Նրա հարության մեջ Նրա մահվան միջոցով. Քրիստոսն Իր մարդկային ապրելակերպում աղոթում էր, որ Հայրը փառավորի Նրան, և Հայրը պատասխանեց Նրա աղոթքին՝ 17:1, Գրծ 3:13, Ղկս 24:26:

ՈՒՍՈՒՅՍԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

- Դ. Այսպիսի փառավորումը Քրիստոսին Իր մարմնացման փուլից փոխադրեց ներառման փուլ, որտեղ Նա՝ որպես վերջին Աղամը, հարության մեջ դարձավ կենդանարար Հոգի՝ Հվի 1:14, Ա Կրթ 15:45բ, Փլա 1:19:
- Ե. Իր հարության մեջ Իր փառավորման միջոցով Քրիստոսը դարձավ Աստծու անդրանիկ Որդին, ով ուներ և աստվածայնություն, և մարդկայնություն (Գրծ 13:33, Հոմ 8:29). Նա դարձավ կենդանարար Հոգին՝ պնևմատիկ Քրիստոսը (Ա Կրթ 15:45բ, Հվի 20:22). և Նա վերածնեց Իր բոլոր հավատացյալներին, որպեսզի նրանք լինեն Աստծու զավակները, Աստծու կենսաբանական տեսակը (Ա Պտ 1:3):
- III. Քրիստոսի փառավորման՝ Նրա հարության արդյունքը Աստծու բոլոր ընտրված, փրկագնված և վերածնված մարդկանց ընդհանրականությունն է Աստծու հետ երեք տեսանկյուններով՝ Հոր տունը, Որդու խաղողի որթը և Հոգու երեխան:**
- Ա. Վերածնված հավատացյալների հետ ավարտունացած Աստծու ընդհանրականության առաջին տեսանկյունը Հոր տունն է, որի նախատիպը տաճարն է՝ Հվի 14:2, 2:16-21, Ա Տմբ 3:15.
1. Հոր տունը պատրաստված և ավարտունացած Աստծու աստվածային և մարդկային ընդհանրականությունն է՝ կազմված Իր փրկագնած, վերածնած և փոխակերպած ընտրյալներից. Քրիստոսի բոլոր հավատացյալները, որոնք փրկագնվել են Նրա արյամբ, վերածնվել են Նրա կյանքով Իր Հոգու միջոցով և փոխակերպվել են աստվածային տարրով կենդանարար Հոգու միջոցով, «կացարաններ» են Հոր տանը՝ Հվի 14:2, 23:
 2. Հոր այս տունը կառուցվում է այն բանի շնորհիվ, որ փրկագնված ընտրյալներին մշտապես այցելում են Հայրը և Որդին Հոգու հետ, ով բնակվում է փրկագնած ընտրյալների մեջ և դառնում ավարտունացած Եռամեկ Աստծու և Իր փրկագնած ընտրյալների փոխբնակատեղը:
- Բ. Վերածնված հավատացյալների հետ ավարտունացած Աստծու ընդհանրականության երկրորդ տեսանկյունը Որդու ճշմարիտ որթն է 15:1-8, 16.
1. Ճշմարիտ որթը, որպես համարովանդակ Քրիստոսի նշան, պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստծու օրգանիզմն է:
 2. Դրա ճյուղերը Քրիստոսի հավատացյալներն են, ովքեր, ըստ բնության, վայրի ձիթենու ճյուղեր են եղել և պատվաստվել են ազնիվ ձիթենուն (Հոմ 11:17, 24) Քրիստոսին իրենց ներհավատալու միջոցով (Հվի 3:15). և ազնիվ ձիթենին, և ճշմարիտ որթը ցույց են տալիս Քրիստոսին. ուստի ազնիվ ձիթենուն պատվաստվելը Քրիստոսին պատվաստվելն է:
 3. Դրա պատվաստված ճյուղերը վերածնվել են աստվածային կյանքով, կենսական միության մեջ են բերվել խաչված և հարություն

ԱՍՏՎԱԾԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

առած Քրիստոսի հետ, և ընդհանրականություն են կազմել պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստծու հետ:

- Գ. Հարության մեջ վերածնված հավատացյալների հետ ավարտունացած Աստծու ընդհանրականության երրորդ տեսանկյունը Հոգու նոր երեխան է՝ 16:13-16, 19-22.
1. Նոր երեխան՝ նոր մարդու, ծնվել է ավարտունացած Հոգու միջոցով հարության մեջ. այս նոր երեխային՝ նոր մարդուն, ստեղծել է Քրիստոսը խաչի վրա՝ Իր մսեղիում վերացնելով հրամանազրերում եղող պատվիրանների օրենքը՝ խս. 21, 13-15, Եփս 2:15:
 2. Հայրը վերածնել է այս նոր երեխային՝ այս նոր մարդուն, հարուցանված Քրիստոսի հետ՝ Նրա հարության մեջ, իսկ Հոգին ծնել է նրան հավատացյալների հոգում Ա Պտ 1:3, Հոմ 1:4, Հփ 3:6բ:
 3. Քրիստոսին հավատացողների առաջին խումքը, որ չարչարվում էր Քրիստոսի՝ Իր մահով գնալու պատճառով, ծննդաբերող կինն էր, իսկ Քրիստոսը, ով վերադարձավ Իր հարության մեջ, նորածին երեխան էր՝ որպես նոր մարդը՝ 16:20-22, Կոս 3:10-11:
 4. Հավատացյալները հագնում են նոր մարդուն՝ իրենց մտքի հոգում նորոգվելով, որպեսզի ավարտունացնեն Քրիստոսի Մարմինը՝ Եփս 4:23-24:

IV. Քրիստոսի մեջ հարակայել՝ ընդունելով Նրան որպես մեր քնակատեղի, և Նրան բույլ տալ, որ հարակայի մեր մեջ՝ ընդունելով մեզ՝ որպես Իր քնակատեղի, նշանակում է ապրել պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստծու և փրկագնված ու վերածնված հավատացյալների տիեզերական ընդհանրականության իրականության մեջ՝ Հփ 14:2, 10-11, 17, 20, 23.

- Ա. Քրիստոսի մեջ հարակայել, այնպես որ Նա հարակայի մեր մեջ, նշանակում է Նրա մեջ անցկացնել մեր կյանքը՝ ընդունելով Նրան որպես մեր ամեն ինը. Նրան՝ որպես մեր քնակության վայրի, մեր հավիտենական քնակատեղի, ընդունելլ Քրիստոսի փորձառության բարձրագույն և ամենալիարժեք փորձառությունն է՝ Սղմ 90:1, 91:1, 9, Հփ 15:4-5, Հյտ 21:22:
- Բ. Մենք հարակայում ենք Քրիստոսի մեջ, որպեսզի Նա հարակայի մեր մեջ, սիրելով Նրան՝ Հփ 14:21, 23.
1. Սիրելով Տիրոջն առաջին սիրով՝ մենք Նրան տալիս ենք առաջին տեղը բոլոր բաներում, և մենք ընդհանրականության մեջ ենք մտնում Եռամեկ Աստծու հետ՝ դառնալով Նրա քնակատեղը՝ Հյտ 2:4-5, Կոս 1:18բ, Հփ 14:21, 23, Եփս 3:16-17, հմնտ Սղմ 27:4:
 2. Երբ մենք սիրում ենք Տեր Հիսուսին, Նա Իրեն հայտնի է անում մեզ համար, և Հայրը գալիս է Նրա հետ, որպեսզի մեզ մոտ կացարան պատրաստի մեր վայելքի համար. այս կացարանը փոխադարձ կացարան է, որտեղ Եռամեկ Աստված հարակայում է մեր մեջ, իսկ մենք հարակայում ենք Նրա մեջ՝ Հփ 14:23:

ՈՒՍՈՒՅՍԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

3. Որքան շատ սիրենք Տիրոջը, այնքան շատ կունենանք Նրա ներկայությունը, և որքան շատ լինենք Նրա ներկայության մեջ, այնքան շատ կվայելենք այն ամենը, ինչ Նա է մեզ համար. Տիրոջ վերականգնումը Տեր Հիսուսին սիրելու վերականգնումն է՝ Ա Կրթ 2:9-10, Եփս 6:24:
- Գ. Մենք հարակայում ենք Քրիստոսի մեջ, որպեսզի Նա հարակայի մեր մեջ, համագործակցելով Գրվածքներում եղող մշտական խոսքի հետ, որը մեզնից դուրս է, և ներկա խոսքի՝ որպես Հոգու հետ, որը մեր ներսում է՝ Հվի 5:39-40, 6:63, Բ Կրթ 3:6, Հյու 2:7:
1. Արտարին՝ գրված խոսքի շնորհիվ մենք ունենք խորհրդավոր Տիրոջ բացատրությունը, սահմանումը և արտահայտությունը, իսկ ներքին՝ կենդանի խոսքի շնորհիվ ունենք հարակայող Քրիստոսի փորձառությունը և գործնական Տիրոջ ներկայությունը՝ Եփս 5:26, 6:17-18:
 2. Եթե հարակայենք Տիրոջ մշտական և գրված խոսքում, Նրա ակնթարթային և կենդանի խոսքերը կհարակայեն մեր մեջ՝ Հվի 8:31, 15:7, Ա Հվի 2:14:
 3. Այսկերպ մենք արմատ ենք օցում դեպի ներք՝ Քրիստոսի՝ որպես մեր հողի, երկրի մեջ և պտղաբերում ենք դեպի վերև, որպեսզի Հայող փառավորվի՝ Դ Թօ 19:30, Եյու 37:31, Հվի 15:7-8:
 4. Մենք հարակայում ենք Նրա մեջ, իսկ Նրա խոսքերը հարակայում են մեր մեջ, որպեսզի մենք խոսենք Նրա մեջ, իսկ Նա խոսի մեր մեջ՝ Աստծուն մարդու մեջ և մարդուն Աստծու մեջ ներկառուցելու համար՝ իս. 7, Բ Կրթ 2:17, 13:3, Ա Կրթ 14:4բ:
 5. Ամեն առավոտ մենք պետք է սրբացվենք՝ դիպչելով Խոսքին և քոյլ տալով, որ Հոգին դիպչի մեզ, որպեսզի տեղափոխվենք մեզնից՝ մեր հին բնակության վայրից՝ Եռամեկ Աստծու մեջ՝ մեր նոր բնակության վայր, Եռամեկ Աստծու փոխներկայության մեջ եղող միասնության վայր՝ Հվի 17:17, 21, Եփս 5:26:
- V. Նոր Երուսաղեմը պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստծու և վերածնված, սրբացված, նորոգված, փոխակերպված, կերպարանակցված և փառավորված Եռամաս եկեղեցու վերջնական ընդհանրականությունն է՝ Հյու 21:3, 22.
- Ա. Նոր Երուսաղեմն ընդհանրական անձ է՝ ընդհանրական մեծ Աստվածամարդ. այդ ընդհանրական անձը զույգ է՝ պատրաստված Եռամեկ Աստված, ով ամուսնացել է փոխակերպված Եռամաս մարդու հետ. դա Հոգին և հարսն են, որոնք միասնություն, միաձուլում և ընդհանրականություն են կազմել՝ մեկ ամբողջություն դառնալու համար՝ 22:17ա:
- Բ. Աստված երեքն է՝ Հայրը, Որդին և Հոգին՝ ընդհանրական անձը. մենք՝ միլիոնավոր հավատացյալներս, նույնպես ընդհանրական անձ ենք. այս անձերն այժմ մեկը մյուսի մեջ են՝ Հվի 14:20-21, 15:5, Ա Հվի 4:15-16:
- Գ. Մենք Աստծու խորանն ենք՝ որպես Նրա բնակատեղը, իսկ Աստված

ԱՍՏՎԱԾԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

մեր տաճարն է՝ որպես մեր բնակատեղը. դա Աստծու և մարդու փոխադարձ կացարանն է՝ Հյտ 21:2-3, 22-23, Սղմ 90:1, 27:4, Երկ Օր 33:27:

- Դ. Նոր Երուսաղեմը Աստծու խորանն է, և այդ խորանի կենտրոնը Քրիստոսն է՝ որպես քարցված մանանան. այս տիեզերական, աստվածամարդկային ընդհանրականության՝ Աստծու և մարդու փոխբնակատեղի մեջ ներառվելու ճանապարհը Քրիստոսին՝ որպես քարցված մանանայի, ուտելն է՝ Հյտ 21:3, Ելց 16:32-34, Եքր 9:4, Հյտ 2:17.
1. Քրիստոսը՝ որպես քարցված մանանան, Հայր Աստծու մեջ է՝ որպես ոսկե սափորի. Հայրը Քրիստոսի՝ որպես տապանակի մեջ է Նրա երկու բնություններով՝ աստվածայնությամբ և մարդկայնությամբ, իսկ Քրիստոսը՝ որպես ներբնակվող Հոգին, ապրում է մեր վերածնված հոգու՝ որպես Սրբությունների Սրբության իրականության մեջ. սա նշանակում է, որ Որդին Հոր մեջ է, Հայրը Որդու մեջ է և Որդին՝ որպես Հոգին, Սրբությունների Սրբության իրականությունն է:
 2. Մենք չպետք է միանանք աշխարհին, մենք պետք է մտնենք Նոր Երուսաղեմի ընդհանրականության մեջ Քրիստոսին՝ որպես քարցված մանանայի, ուտելու միջոցով. Երբ ուտում ենք Նրան, ապրում ենք Նրա շնորհիվ այս մեծ ընդհանրականության մեջ, որն այսօր Քրիստոսի ընդհանրական Մարմինն է և որը վերջնարդյունքում ավարտունացնում է Նոր Երուսաղեմը:
 3. Սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը, Աստծու հավիտենական տնտեսության նպատակն է. եզակի Աստված վերջնարդյունքում ընդհարձակում և դառնում է մեկ քաղաք՝ Իր հավիտենական ընդարձակման և հավիտենական արտահայտության համար՝ որպես մեծ աստվածամարդկային տիեզերական ընդհանրականություն: